Հավելված
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 301-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

Երևան 2015

Բովանդակություն

Ներածություն

1. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն և առկա հիմնախնդիրների բացահայտում

2. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումներ և դրանց իրականացման ժամանակացույց

3. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմներ

4. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ

5. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի գործունեության ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացված են ամփոփ տեղեկություններ

- տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման,
- տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի,
- տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմների,
- մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների,
- օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթների վերաբերյալ:

Ծրագրի նպատակներն են

1. պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը ապրանքային շուկաներում,
2. ապահովել բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր,
3. նպաստել տնտեսական զարգացման համար բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը և սպառողների շահերի պաշտպանությանը,
4. խթանել մրցակցային մշակույթը:

Վերը նշված նպատակները համապատասխանում են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) Հանձնաժողովի առջև դրված խնդիրներին, ՀՀ կառավարության ծրագրի դրույթներին, շուկայական տնտեսության զարգացման նպատակով պետության կողմից որդեգրված հիմնարար սկզբունքներին, ինչպես նաև արդի տնտեսական և իրավական պայմաններում խորացող մրցակցային մշակույթի կիրարկման պահանջներին:

Ծրագրային աշխատանքների խթանման համար Հանձնաժողովը կշարունակի իրականացնել արդյունավետ, լայնածավալ և ակտիվ համագործակցություն մի շարք միջազգային կազմակերպությունների, Եվրասիական տնտեսական միության,

արտերկրների մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինների, ԱՊՀ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի հետ հետևյալ ուղղություններով.

- մրցակցության քաղաքականության կիրարկման լավագույն փորձի փոխանակման,
- օրենսդրական բարեփոխումների իրականացման, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության կողմից սահմանված մրցակցային ընդհանուր սկզբունքների և կանոնների հետ օրենսդրության ներդաշնակեցման,
- թիրախային ոլորտների ապրանքային շուկաներում առկա մրցակցության իրավիճակի ուսումնասիրությունների իրականացման նպատակով կարողությունների զարգացման,
- գործընկերության ամրապնդման և համատեղ ծրագրերի իրականացման,
- մրցակցության քաղաքականության մասին իրազեկվածության բարձրացման,
- մրցակցային խնդիրների վերաբերյալ խորհրդատվության անհրաժեշտության դեպքում միջազգային փորձագետների ներգրավման,
- Հանձնաժողովի աշխատակիցների համար հատուկ թեմաներով դասընթացների կազմակերպման:

Հաշվի առնելով ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը, դրանց սոցիալական նշանակությունը և նախկինում հայտնաբերված խախտումների բնույթը՝ ծրագրային տարում Հանձնաժողովն առաջնահերթ ուսումնասիրության ոլորտներում (սոցիալական նշանակության և բարձր կենտրոնացվածության պարենային և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների շուկաներում) կիրականացնի ուսումնասիրություններ շուկայի մուտքի խոչընդոտների, պետական գնումների ընթացակարգերում իրականացված հակամրցակցային գործողությունների, անբարեխիղճ մրցակցության դրսևորումների, գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացումների, գերիշխող դիրքի չարաշահումների, հակամրցակցային համաձայնությունների բացահայտման նպատակով: Միաժամանակ, Հանձնաժողովը կիրականացնի օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները նաև քաղաքացիներից և տնտեսվարող սուբյեկտներից ստացվող բողոքների,

զանգվածային լրատվության միջոցներում հրապարակվող մրցակցային հարցերի քննարկման ընթացքում:

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության իրականացման ընթացքում առանձնապես կարևորվում է ապրանքային շուկայում մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը: Միաժամանակ, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրարկման տեսանկյունից հատուկ ուշադրության են արժանի տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկաներում մրցակցության սահմանափակման, կանխման և արգելման այն գործողությունները կամ վարքագիծը, որոնք կարող են հանգեցնել.

- Մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահմանը,
- Հակամրցակցային համաձայնությունների կնքմանը (կայացմանը),
- Գործողության մեջ դրված չհայտարարագրված կամ արգելված համակենտրոնացմանը,
- Անբարեխիղճ մրցակցության գործողությանը,
- Արգելված պետական օժանդակությանը:

Մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման դեպքերի բացահայտման ուղղություն

Ապրանքային շուկաներում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի վերաբերյալ նախորդ տարիներին իրականացված Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված սուբյեկտները կարող են օգտվել տնտեսական ու իրավական իրավիճակների որոշակի փոփոխություններից և գերիշխող դիրքի չարաշահման ճանապարհով առավելության հասնել հնարավոր մրցակիցների նկատմամբ: Հանձնաժողովի կողմից վերջին շրջանում իրականացված մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող խոշոր ընկերությունների վարքագծին առնչվող մի շարք ուսումնասիրություններ տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման տեսանկյունից ունեն առանձնահատուկ նշանակություն:

Այսպես, Հանձնաժողովը ստացված բողոքների հիման վրա ուսումնասիրություն է իրականացրել երկաթուղային բեռնափոխադրումների ոլորտում: Մասնավորապես, ըստ ստացված բողոքների, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությունը 2014 թվականի ապրիլից 16 տոկոսով բարձրացրել է նավթամթերքի երկաթուղային բեռնափոխադրումների գինը:

Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության, ինչպես նաև «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում պարզվել է, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությունը պարբերաբար փոփոխում է միջպետական և ներպետական հեռահաղորդակցություններում երկաթուղային բեռնափոխադրումների գները: Ընդ որում, Հանձնաժողովի հաշվարկների համաձայն մի շարք դեպքերում ընկերության կողմից երկաթուղային բեռնափոխադրումների գնային փոփոխություններն ավելի են համապատասխան ծախսային հոդվածների փոփոխությունից:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության կողմից հիմնական փաստարկի էությունը կայանում է նրանում, որ ընկերությունը ՀՀ-ում գործունեություն է ծավալում 2008 թվականից և 2014 թվականին ունի 9,3 մլրդ դրամի կուտակված վնաս, ուստի ընկերությունը միջոցներ է ձեռնարկում կուտակված վնասը մեղմելու համար:

Հանձնաժողովը ստուգել է նաև «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության կուտակված վնասի առաջացման պատճառները և պարզել, որ վնասի պատճառը ցածր շահութաբերության պայմաններում կոնցեսիոն պայմանագրով նախատեսված և իրականացված ավելի քան 92 մլրդ դրամ ներդրումների ամորտիզացիոն մասհանումներն են, որն էլ հանգեցրել է ընկերությունում վնասների առաջացմանը:

Մրցակցության օրենսդրությանը համապատասխանության պարզման նպատակով Հանձնաժողովը ներկայումս շարունակում է ուսումնասիրել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության կողմից կազմակերպված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գնումները:

Բացի այդ, հաշվի առնելով, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությունը հանդիսանում է «Ռուսական Երկաթուղիներ» ԲԲԸ-ի դուստր ձեռնարկությունը, ուստի Հանձնաժողովը կատարված ուսումնասիրության

արդյունքները «Ռուսական Երկաթուղիներ» ԲԲԸ-ին փոխանցելու նպատակով կտրամադրի ՌԴ ֆեդերալ հակամենաշնորհային ծառայությանը:

Հանձնաժողովը 2015 թվականին սոցիալական նշանակության որոշ ապրանքային շուկաներում շարունակել է իրականացնել մրցակցային իրավիճակի վերլուծությանն առնչվող ուսումնասիրություններ: Մասնավորապես, շաքարավազի և ալյուրի ապրանքային շուկաներում կատարված հաշվարկները ցույց են տվել, որ գնային փոփոխությունները պայմանավորված են եղել տնտեսական գործոններով և համահունչ են եղել ծախսային հոդվածների փոփոխություններին: Հատկանշական է, որ 2015 թվականի հունվարից ԵՏՄ անդամակցությունից հետո մի շարք նոր տնտեսվարողներ սկսել են ՌԴ-ից պատրաստի ալյուրի ներմուծումներ իրականացնել, ինչը մրցակցության տեսանկյունից դրական ազդեցություն է ունեցել ոլորտի վրա:

Մշտապես վերահսկողության տակ պահելու նպատակով Հանձնաժողովը պարբերաբար ուսումնասիրություններ է իրականացնում բարձր կենտրոնացված կարևորագույն ապրանքային շուկաներում: Այս առումով Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել բենզինի ապրանքային շուկայում: Կատարված ուսումնասիրության արդյունքների համաձայն 2015 թվականի հունվարից ՀՀ-ում նկատվել է բենզինի գների նվազեցում: Մասնավորապես 2015 թվականի հունվար-մայիս ամիսներին ՀՀ-ում բենզինի մանրածախ գները նվազել են ավելի քան 10 տոկոսով՝ 1 լիտր բենզինի համար 470 դրամից հասնելով մինչև 420 դրամի:

Հանձնաժողովն ուսումնասիրության շրջանակներում կատարել է նաև մի շարք երկրներում բենզինի գնային փոփոխությունների դիտարկումներ: Մասնավորապես ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում բենզինի գների ուսումնասիրությունից պարզվել է, որ այդ երկրներում բենզինի գնի կառուցվածքում նավթն ունի բավականին մեծ տեսակարար կշիռ: Այսպես, օրինակ ԱՄՆ-ում բենզինի մանրածախ գների շուրջ 65 տոկոսը կազմում է նավթի արժեքը, իսկ եվրոպական երկրներում՝ շուրջ 35 տոկոսը: ՀՀ-ում բենզինի մանրածախ գների հիմնական մասը ձևավորում են հարկերը, իսկ նավթի արժեքը կազմում է 5-10 տոկոս: Ընդ որում, ՀՀ-ում բենզինի արտադրություն չկա, և բենզին ներմուծվում է հիմնականում ՌԴ-ից: Այս պատճառով միջազգային շուկաներում նավթի գների փոփոխությունները ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում բենզինի գների վրա ավելի ուղղակի և մեծ ազդեցություն են ունենում, քան ՀՀ-ում:

Ընդհանուր առմամբ, կատարված հաշվարկների համաձայն 2015 թվականի հունվար-մայիս ամիսներին բենզինի ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից գնային փոփոխությունները համահունչ են եղել տնտեսական գործոնների փոփոխությունների, և 2015 թվականի հունվար-մայիս ամիսներին բենզինի գծով ընկերությունների եկամտաբերությունները մնացել են միջին տարեկան եկամտաբերության մակարդակին:

«Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ, «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» և «Գրանդ Դիլինգ» ՍՊ ընկերությունների նկատմամբ 2015 թվականի ընթացքում Հանձնաժողով բողոքներ են ստացվել առ այն, որ ընկերությունները ստիպում են առևտրի օբյեկտներին իրացնել միայն իրենց արտադրած ծխախոտի տեսականին՝ փոխարենը խոստանալով տրամադրել նվերներ՝ իրացման որոշակի ծավալների ապահովման դեպքում: Մրցակցության տեսանկյունից խնդիրը կայանում է նրանում, որ «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ, «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» և «Գրանդ Դիլինգ» ՍՊ ընկերությունների կողմից իրականացված գործողությունները կարող են հանդիսանալ առևտրի օբյեկտներին լրացուցիչ պարտավորությունների պարտադրման, ինչպես նաև ծխախոտի շրջանառության բնագավառում գործունեություն իրականացնող մրցակից ընկերությունների համար շուկա մուտքի խոչընդոտների ստեղծման (շուկայից դուրս մղման) հնարավոր հակամրցակցային գործողություններ: Հաշվի առնելով այն, որ բողոքներում նշված վարքագիծը կարող է պարունակել մրցակցության օրենսդրության հնարավոր խախտման հատկանիշներ՝ Հանձնաժողովն ընկերությունների նկատմամբ հարուցել է վարչական վարույթ և սկսել է իրականացնել ծավալուն ուսումնասիրություններ տվյալ ուղղությամբ: Ուսումնասիրության շրջանակներում արձանագրվել են բազմաթիվ փաստեր, որոնց համաձայն «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ, «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» և «Գրանդ Դիլինգ» ՍՊ ընկերությունների կողմից առևտրի օբյեկտներին, կախված իրացման ծավալներից, տրամադրվել են նվերներ (հեռուստացույց, գազօջախ, փոշեկուլ և այլն)՝ պայմանով, որ առևտրի օբյեկտները հրաժարվեն իրացնել ծխախոտ արտադրող և ներմուծող այլ մրցակից ընկերությունների ծխախոտային արտադրանքը: Նշված վարքագիծը հանդիսանում է շուկա մուտքի խոչընդոտների ստեղծման

(շուկայից դուրս մղման) միջոցով իրականացված տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների խախտում:

«Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով արտաքին գովազդային վահանակների սեփականատերերի և խոշոր գովազդային ընկերությունների միջև հնարավոր հակամրցակցային համաձայնությունների գոյության մասին: Համաձայն դիմումատուի՝ գովազդային վահանակների շուկան կենտրոնացված է, և դրանով պայմանավորված՝ վահանակների վրա գովազդ տեղադրելու համար գները բավականաչափ բարձր են: Ըստ այդմ, Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ շուկայում ընկերությունների կողմից կիրառվում են տարբեր գներ և հակամրցակցային համաձայնության փաստեր չեն արձանագրվել: Միաժամանակ պարզվել է, որ որոշ ընկերություններ չեն պահպանել Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանված գովազդային վահանակների տեղադրմանն առնչվող առավելագույն չափերը, որի արդյունքում տվյալ ընկերությունները կարող են ստանալ մրցակցային առավելություններ այլ ընկերությունների նկատմամբ:

Նշված խնդիրը դուրս է գտնվել Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներից, ուստի ուսումնասիրության արդյունքները տրամադրվել են Երևանի քաղաքապետարանին:

ԵՏՄ անդամ-պետություններում «արդար ռոումինգի» համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում Հանձնաժողովը 2015 թվականի ընթացքում սկսել է ուսումնասիրել միջազգային բջջային կապի (ռոումինգի) ծառայությունների մատուցման ոլորտը: Համակարգի ներդրման գլխավոր նպատակն է ապահովել միջազգային բջջային կապի օպերատորների կողմից մատուցվող ծառայությունների սակագների հնարավորինս մոտեցումը տեղական բջջային ծառայությունների սակագներին: Հանձնաժողովը, հիմք ընդունելով այս ոլորտի զարգացման հարցերով ստեղծված միջազգային աշխատանքային խմբի կողմից հաստատված ճանապարհային քարտեզը, ՀՀ տարածքում գործող բջջային կապի օպերատորների հետ տարվող աշխատանքների շրջանանկներում իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք նախատեսվում է շարունակել նաև 2016 թվականի ընթացքում: Հարկ է նշել նաև, որ

Հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա ՀՀ տարածքում գործող բջջային կապի օպերատորները սկսել են բանակցել ԵՏՄ անդամ-պետություններում գործող գործընկեր-օպերատորների հետ որոշ ծառայությունների գնագոյացման գործընթացը ձևավորող ծախսային բաղադրիչները նվազեցնելու և/կամ զրոյացնելու շուրջ, ինչի արդյունքում ակնկալվում է նվազեցում:

Հակամրցակցային համաձայնությունների կնքման (կայացման) բացահայտման ուղղություն

Հանձնաժողովի նախորդ տարիներին կուտակած փորձը ցույց է տալիս, որ բարձր կենտրոնացվածության և մասնակիցների փոքր թվով ապրանքային շուկաներում գործող մի խումբ խոշոր տնտեսվարող սուբյեկտներ, հնարավոր մրցակիցների նկատմամբ առավելության հասնելու և շահութաբերության զգալի մակարդակ ապահովելու նպատակով, կարող են միմյանց հետ կնքել հակամրցակցային համաձայնություններ՝ խաթարելով մրցակցային միջավայրի ձևավորման և մրցակցության զարգացման հեռանկարները: Միաժամանակ, հակամրցակցային համաձայնությունները՝ մասնավորապես միևնույն ապրանքային շուկայում գործող հնարավոր կամ փաստացի մրցակից հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված համաձայնությունները կարող են դասվել մրցակցային օրենսդրության լուրջ խախտումների շարքին և դրանց բացահայտումը մշտապես գտնվում է Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Մյուս կողմից, պետական գնումների գործընթացում տնտեսվարող սուբյեկտների միջև մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման գործողությունները կարող են հանդիսանալ բավականին ռիսկային հակամրցակցային համաձայնություններ:

Պետական գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը և կանխարգելումը նպաստում է այդ ոլորտի կարգավորմանը, շուկայի մասնակիցների բնականոն գործունեության համար անհրաժեշտ մրցակցային միջավայրի ապահովմանը, պետական միջոցների արդյունավետ օգտագործմանը և սպառողների շահերի պաշտպանությանը: Նշված գործընթացների իրականացման արդյունքում կարող են մեծանալ տնտեսվարող սուբյեկտների իրացման ծավալները, նվազել հավաքագրված եկամուտների հնարավորինս արդյունավետ օգտագործմամբ

պայմանավորված՝ պետությանը հասցված վնասների չափերը, ինչպես նաև սպառողները կարող են ձեռք բերել բարձր որակի և ցածր գնի ապրանքներ ու ծառայություններ:

Համաձայն վերոնշյալի՝ ներկայացնենք Հանձնաժողովի կողմից վերջին շրջանում հակամրցակցային համաձայնության գործողությունների բացահայտման ուղղությամբ իրականացված մի շարք ուսումնասիրություններ, որոնք տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության և առկա խնդիրների բացահայտման տեսանկյունից ունեն առանձնահատուկ նշանակություն:

Տվյալ ոլորտում հնարավոր հակամրցակցային համաձայնությունների բացահայտման նպատակով Հանձնաժողովը դիտարկել է ներառական կրթություն իրականացնող թվով 122 ուսումնական հաստատությունների կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված շուրջ 411 գնման ընթացակարգ: Վերոնշյալի արդյունքում Հանձնաժողովը մի շարք ընկերությունների կողմից Օրենքի հնարավոր խախտման բացահայտման նպատակով հարուցել է վարչական վարույթներ, որոնց ուղղությամբ կատարվող աշխատանքները նախատեսվում է շարունակել նաև 2016 թվականի ընթացքում: Միաժամանակ, ուսումնասիրությունների արդյունքում արդեն իսկ բացահայտված մի շարք խնդիրների լուծման նպատակով Հանձնաժողովը ներկայացրել է օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ, որոնք ուղղված են վերադաս և լիազոր մարմինների ենթակայությամբ գործող հաստատությունների կողմից իրականացվող պետական գնումների գործընթացներում գնումների օրենսդրության պահանջների պահպանման, այդ թվում՝ մրցույթների թափանցիկության և հրապարակայնության պահանջի ապահովման նկատմամբ սահմանված վերահսկողության խստացմանը:

Հանձնաժողովը «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊ ընկերության 2015 թվականի դիմումի հիման վրա սկսել է ուսումնասիրություններ նաև «Կոկա-կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲ ընկերության կողմից հնարավոր հակամրցակցային գործողությունների դրսևորման միջոցով գազավորված և զովացուցիչ ըմպելիքների շրջանառության ոլորտում ձևավորված մրցակցային միջավայրի խաթարման վերաբերյալ: Մասնավորապես, համաձայն դիմումատուի՝ «Կոկա-կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲ ընկերության կողմից

իրականացվող գործողությունների արդյունքում «Դալմա Գարդեն Մոլ» զվարճաառևտրային համալիրի սննդի սպասարկման տարածքում գործունեություն իրականացնող հանրային սննդի օբյեկտները ներկայումս իրացնում են միայն վերջինիս կողմից մատակարարվող զովացուցիչ ըմպելիքները, ինչի հետևանքով «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊ ընկերությունը զրկվում է վերոնշյալ հանրային սննդի օբյեկտներում ներկայացված լինելու և իր կողմից առաջարկվող ապրանքներն իրացնելու հնարավորությունից:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրականացվող և ներկայումս շարունակվող ուսումնասիրությունները նպատակ ունեն պարզել «Կոկա-կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲ ընկերության կողմից գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման, ինչպես նաև՝ «Դալմա Գարդեն Մոլ» զվարճաառևտրային համալիրի սննդի սպասարկման տարածքում գործունեություն իրականացնող հանրային սննդի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների և «Կոկա-կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲ ընկերության միջև կայացված հնարավոր հակամրցակցային համաձայնությունների առկայությունը:

Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության բացահայտման ուղղություն

Հանձնաժողովի վերջին տարիների գործունեության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեծ թիվ են կազմում տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումների վերաբերյալ ուսումնասիրությունների գործերը՝ մասնավորապես շատ են գործողության մեջ դրված՝ չհայտարագրված համակենտրոնացումների վերաբերյալ դեպքերը: Տվյալ դեպքերում Հանձնաժողովը համակետրոնացման գործընթացների նկատմամբ իրականացնում է Օրենքով իրեն վերապահված վերահսկողության գործառույթը՝ համապատասխան տեղեկատվության ձեռք բերման և ապրանքային շուկաների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա: Միաժամանակ հաշվի են առնվում արդյունավետության և մրցակցային միջավայրի վրա դրանց ազդեցության հանգամանքները: Ըստ էության, Հանձնաժողովի կողմից առանձնահատուկ ուշադրության են արժանանում հայտարարագրման ենթակա կամ տնտեսական մրցակցությունն էապես խոչընդոտող, այդ թվում՝ գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող

համակենտրոնացումները, որոնց պետական կարգավորումը իրականացվում է Հանձնաժողովի որոշմամբ՝ Օրենքով սահմանված կարգով:

Պետք է նշել, որ համակենտրոնացումների նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման ուղղությամբ դեռևս շարունակում է խնդրահարույց մնալ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվական բազաներին Հանձնաժողովի հասանելիության ապահովման խնդիրը: Մասնավորապես, բաժնետիրական ընկերությունների հիմնադիրների վերաբերյալ փոփոխությունները գրանցվում են ռեեստր վարող կազմակերպություններում, հետևաբար Հանձնաժողովի կողմից բաժնետիրական ընկերություններում կատարվող գործարքների, վերակազմակերպումների և վերջիններիս կողմից չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման համար տեղեկատվական աղբյուրները բացակայում են: Ըստ այդմ՝ Հանձնաժողովի տեսադաշտից դուրս են մնում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերությունում և այլ ռեեստր վարող կազմակերպություններում արժեթղթերով կատարվող գործարքների և այդ գործարքները կատարած անձանց վերաբերյալ տվյալները, և Հանձնաժողովը, ըստ էության, զրկված է նշված գործարքների նկատմամբ վերահսկողության իրականացման հնարավորությունից: Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում տալ համապատասխան օրենսդրական լուծումներ՝ ապրանքային շուկաներում հնարավոր համակենտրոնացումների նկատմամբ Հանձնաժողովի կողմից ամբողջական վերահսկողության իրականացման նպատակով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովի կողմից վերջին շրջանում համակենտրոնացումների վերահսկողության ուղղությամբ իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ, որոնք ունեն կարևոր նշանակություն:

Հանձնաժողովը մանրազնին ուսումնասիրության է ենթարկել «Նուբարաշենի թռչնաբուծական ֆաբրիկա» և «Փյունիկ տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերությունների համակենտրոնացման շրջանակներում իրականացված գործարքը: Մասնավորապես, նախատեսվող գործարքի շրջանակներում «Նուբարաշենի թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերությունը, որը զբաղվում է հավի մսի արտադրությամբ, ցանկացել է ձեռք բերել հավերի մայրական կազմի, ճտերի և

ինկուբացիոն ձվերի բուծման գործունեությամբ զբաղվող «Փյունիկ տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերությունը: Ընդ որում, «Փյունիկ տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերությունը տեղական ընկերությունների շարքում հանրապետության տարածքում հանդիսանում է հավերի մայրական կազմի, ճտերի և ինկուբացիոն ձվերի հիմնական մատակարարը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Փյունիկ տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերության թողարկած արտադրանքը հումք է հանդիսանում «Նուբարաշենի թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերության համար և տվյալ գործարքով ուղղահայաց կապ է ստեղծվում նշված ընկերությունների միջև, Հանձնաժողովը թույլատրել է գործարքի կատարումը և սահմանել պարտադիր պայման՝ պարտավորեցնելով «Փյունիկ տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերությանը ապրանքների իրացման գործընթացներում կիրառել ոչ խտրական մոտեցում հավի մսի և հավի ձվի արտադրությամբ զբաղվող այլ ընկերությունների նկատմամբ:

Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության իրականացման լիազորությունների շրջանակներում Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություններ «Մակորշին» և «Մեդիս-Շին» ընկերություններում տեղի ունեցած համակենտրոնացման գործարքներիի կապակցությամբ: Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ «Մակորշին» ընկերությունը զբաղվում է բետոնի արտադրությամբ, «Մեդիս-Շին» ընկերությունն արդյունահանում է ավազ և կոպիճ, իսկ այդ ընկերությունների 100 տոկոս փայաբաժինը ձեռքբերող անձը մասնակցություն ունի նաև մի շարք ընկերություններում, որոնք գործում են շինարարական ապրանքների շրջանառության ոլորտում: Ըստ էության, դիտարկվող համակենտրոնացումը դասվում է ուղղահայաց համակենտրոնացումների շարքին, որի շրջանակներում միևնույն անձի վերահսկողությանն են անցնում միմյանց հետ փոխկապակցված ապրանքային շուկաներում գործող ընկերություններ, որոնց վարքագիծը հետագայում կգտնվի Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Վարչական վարույթի արդյունքում ընկերությունը պարտավորվել է հետագայում զերծ մնալ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումներից:

Հանձնաժողովը 2016 թվականի ծրագրային տարում շարունակելու է ուշադրության կենտրոնում պահել ոչ միայն հորիզոնական համակենտրոնացումները,

որոնք կայացվում են միևնույն ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև, այլև որոշակի փոխկապակցվածություն ունեցող կամ տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների, ինչպես նաև ֆիզիկական անձանց մասնակցությամբ՝ խառը տիպի համակենտրոնացումները: Համակենտրոնացումների նկատմամբ ամբողջական վերահսկողության իրականացման համար կշարունակվեն նաև չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման նպատակով իրականացվող աշխատանքները՝ արդեն իսկ արդյունավետորեն գործող մեխանիզմների ճշգրիտ կիրարկման միջոցով:

Նշենք, որ տնտեսվարող սուբյեկտների միջև կայացված համակենտրոնացումների հայտարարագրումը Հանձնաժողովին հնարավորություն է տալիս պարզել գործարքների իրականացման նպատակները, գործարքների արդյունքում կողմերի ակնկալվող օգուտները, իսկ սուբյեկտների գործունեությանն առնչվող ապրանքային շուկաների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս գնահատել մրցակցային միջավայրի վրա դրանց ունեցած հնարավոր ազդեցությունները:

Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտման ուղղություն

Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտման ուղղությամբ Հանձնաժողովի գործունեության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսվարող սուբյեկտները հաճախ են փորձում նշված գործողությունների միջոցով առաջացնել անհավասար մրցակցային պայմաններ, ստեղծել շուկայի մուտքի խոչընդոտներ, ինչպես նաև խթանել անբարենպաստ իրավիճակի ձևավորումը՝ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտներին շուկայից դուրս մղման համար: Մյուս կողմից, տնտեսվարող սուբյեկտների տվյալ վարքագիծը մեծ վնաս է հասցնում սպառողների շահերին՝ խախտելով նրանց իրավունքներն ու օրինական շահերը: Հաշվի առնելով վերոնշյալը, ապրանքային շուկաներում բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու նպատակով Հանձնաժողովը մշտապես իրականացնում է անբարեխիղճ մրցակցության գործողությունների դրսևորման բացահայտման, կանխման և արգելման ծավալուն աշխատանքներ:

Վերջին շրջանում Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների անբարեխիղճ մրցակցության գործողությունների դրսևորման բացահայտման վերաբերյալ իրականացված մի շարք ուսումնասիրություններ, որոնք ունեն կարևոր նշանակություն տվյալ ուղղությամբ աշխատանքների կատարման ընթացքում:

Վերջին տարիներին Հանձնաժողովում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բավականաչափ հաճախ են հանդիպում հասարակության մոլորեցմանն ուղղված գործողությունները: Նշված գործերից է «Օրանժ Արմենիա» ընկերության կողմից գովազդի միջոցով իրականացված անբարեխիղճ մրցակցությունը: Մասնավորապես, ընկերության Երևան քաղաքի տարածքում, ինչպես նաև մարզերում գտնվող վաճառասրահներում ներկայացված գովազդային վահանակների վրա հեռախոսների վերաբերյալ տեղեկատվությունից բացի առկա է եղել տեղեկատվություն առ այն, որ 24 ամսով բաժանորդագրվելու դեպքում մի շարք մոդելների հեռախոսներ կարելի է ձեռք բերել 1 դրամ գնով: Հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցումների և ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ առաջարկվող փաթեթն իր մեջ ներառում է երեք սակագնային պլան՝ համապատասխանաբար 4 000, 6 000 և 10 000 դրամ արժողությամբ: Միաժամանակ նշենք, որ գովազդային պաստառների վրա որևէ նշում չի եղել, թե հեռախոսը 1 դրամով ձեռք բերելու դեպքում սպառողը փաթեթի որ սակագնային պլանին պետք է միանա, մինչդեռ հեռախոսների մի շարք մոդելներ հնարավոր է ձեռք բերել 1 դրամով բացառապես 10000 և (կամ) 6000 դրամ արժողությամբ սակագնային պլանին բաժանորդագրվելու դեպքում: Ելնելով ուսումնասիրությունների արդյունքներից՝ Հանձնաժողովը «Օրանժ Արմենիա» ընկերության կողմից գովազդի ընթացքում ներկայացվող առաջարկի վերաբերյալ թերի կամ ոչ լիարժեք տեղեկատվություն ներկայացնելու գործողությունը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ հասարակության մոլորեցում:

Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում բենզինի և դիզելային վառելիքի ներմուծման ու իրացման ոլորտներում ուսումնասիրությունների իրականացման ընթացքում բացահայտել է մի շարք ընկերությունների կողմից գովազդի միջոցով երբ այդ ժամանակահատվածում ընկերությունները չեն ունեցել տվյալ ապրանքի ձեռքբերում: Ուսումնասիրությունների արդյունքում ձեռք բերված փաստերի հիման

վրա Հանձնաժողովը ութ տնտեսվարող սուբյեկտների կողմից դրսևորած վերոնշյալ վարքագիծը բնութագրել է որպես գովազդի միջոցով հասարակության մոլորեցում:

Մի շարք ընկերությունների կողմից ապրանքների զեղչերի վերաբերյալ իրականացված գովազդների արդյունքում սպառողների շրջանում առաջացած դժգոհությունների հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություններ: Մասնավորապես, հսկիչ գնումների միջոցով Հանձնաժողովը պարզել է, որ զեղչերը չեն տարածվում ընկերությունների վաճառակետերում ներկայացված ողջ ապրանքատեսականու վրա, չնայած ընկերությունների առևտրային օբյեկտների արտաքին մասում՝ դիմապակու վրա տեղադրված է «զեղչեր ողջ տեսականու համար» բովանդակությամբ գովազդ: Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ նշված վարքագիծը սպառողների մոտ կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման, մի շարք ընկերությունների կողմից դրսևորած տվյալ վարքագիծը որակել է որպես հասարակության մոլորեցում:

Հանձնաժողովի կողմից շարունակական իրականցվող դիտանցումների, հսկիչ գնումների ընթացքում 2015 թվականին բացահայտվել են ընկերությունների կողմից իրացվող ապրանքների մակնշման միջոցով հասարակության մոլորեցման բազմաթիվ դեպքեր: Այսպես, «Ինվեստ-Ինտորգ» ընկերության մոտ իրականացրած դիտանցման և հսկիչ գնման արդյունքում պարզվել է, որ ընկերությանը պատկանող մեծածախ առևտրի կետում վաճառվող մակարոնի պարկի վրա նշված տեղեկատվությունը եղել է ոչ ամբողջական, ինչը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման «Ինվեստ-Ինտորգ» ընկերության կողմից իրացվող ապրանքների վերաբերյալ: Հանձնաժողովը տվյալ վարքագիծը որակել է որպես հասարակության մոլորեցում:

Հանձնաժողովը 2015 թվականին հաճախակի է բողոքներ ստացել տնտեսվարող սուբյեկտների կողմից մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման իրավունքի խախտմամբ պայմանավորված անբարեխիղճ մրցակցության գործողությունների հնարավոր դրսևորումների վերաբերյալ: Տվյալ համատեքստում՝ «Վ.Ա.Ս. Գրուպ» ընկերության կողմից ներկայացված բողոքի հիման վրա Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացրել ընկերության անվանմանը շփոթության աստիճանի նման մեկ այլ՝ «ՎԱՍ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից անբարեխիղճ մրցակցության գործողության հնարավոր դրսևորման

ուղղությամբ: Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ «Վ.Ա.Ս. Գրուպ» ընկերության ֆիրմային անվանումը պետական գրանցման է ենթարկվել դեռևս 2000 թվականի նոյեմբերի 21-ին, և ընկերությունը զբաղվում է ապրանքների ներմուծմամբ և վաճառքով, իսկ «ՎԱՍ Գրուպ» ընկերությունը զբաղվում է ծանր արդյունաբերական տեխնիկայի պահեստամասերի ներկրմամբ և վաճառքով: Բացի այդ, դիտանցումների ընթացքում բացահայտվել են դեպքեր, երբ «ՎԱՍ Գրուպ» ընկերությունը ֆիրմային անվանումն օգտագործում է նաև որպես չգրանցված ապրանքային նշան, որը կարող է շփոթություն առաջացնել «Վ.Ա.Ս. Գրուպ» ընկերության ֆիրմային անվանման և գրանցված ապրանքային նշանի նկատմամբ:

Թեև դիտարկվող ընկերությունները ներկայումս գործունեություն են իրականացնում տարբեր ապրանքային շուկաներում, այդուհանդերձ ապրանքների ձեռք բերման ընթացքում սպառողների շրջանում հնարավոր է շփոթության առաջացում: Ըստ այդմ, «ՎԱՍ Գրուպ» ընկերության կողմից «Վ.Ա.Ս. Գրուպ» ֆիրմային անվանմանը շփոթության աստիճանի նման՝ «ՎԱՍ Գրուպ» ֆիրմային անվանման օգտագործումը Հանձնաժողովը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Վերը ներկայացված գործերը բազմաթիվ են և հանդիսանում են ընդամենը օրինակներ մրցակցության պաշտպանության բնագավառում առկա խնդիրները ներկայացնելու համար:

Այսպիսով, վերոնշյալ խնդիրների տեսանկյունից տնտեսվարող սուբյեկտների անբարեխիղճ մրցակցության վարքագիծը հիմնականում դրսևորվում է գովազդի կամ ծառայությունների մատուցման ընթացքում գովազդվող ապրանքների կամ ծառայությունների վերաբերյալ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք, կամ այնպիսի տեղեկատվության ներկայացմամբ, որը սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել գովազդվող ապրանքների կամ ծառայությունների վերաբերյալ: Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից արդեն իսկ իրականացված վարչական վարույթների արդյունքում հայտնաբերված խախտումների գերակշռող մասը վերաբերում է ծառայությունների մատուցման և ապրանքների իրացման ոլորտին, իսկ մնացած մասը՝ սննդամթերքի արտադրության և իրացման ընթացքում օրենքով սահմանված տեղեկատվությունը սպառողին չներակայացնելուն

կամ թերի ներկայացնելուն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2016 թվականի ընթացքում ևս Հանձնաժողովը կշարունակի նշված խնդիրների ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների իրականացումը:

Մրցակցային միջավայրի վրա ազդող՝ այլ պետական մարմինների իրավասությանն առնչվող խնդիրների բացահայտման ուղղություն

Ապրանքային շուկաներում սուբյեկտների համար հավասար պայմաններով մրցակցային միջավայր ստեղծելու խնդրում մեծապես կարևորվում է նաև Հանձնաժողովի համագործակցությունն այլ պետական մարմինների հետ: Իրոք, համաձայն Հանձնաժողովի կողմից բավականին մեծ թվով իրականացված ուսումնասիրությունների արդյունքների՝ հավասար մրցակցությունը խաթարող գործոնների վերացման խնդիրը գտնվում է այլ պետական մարմինների իրավասությունների շրջանակներում, և տվյալ համագործակցությունն անհրաժեշտություն է: Ըստ այդմ, վերջին տարիներին Հանձնաժողովը համագործակցության շրջանակներում իրավասու պետական մարմիններին տրամադրել է տրանսպորտի, պետական գնումների, առողջապահության, շինարարության, ծառայությունների և այլ ոլորտներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված խնդիրների լուծման և կանխման վերաբերյալ առաջարկություններ: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալ ուսումնասիրությունները:

Հաշվի առնելով ՀՀ տրանսպորտային ուղիների (երկաթուղային, ավտոմոբիլային) սահմանափակվածության պայմաններում ավիացիայի ոլորտի չափազանց մեծ դերը և ՀՀ կառավարության կողմից «բաց երկնքի» քաղաքականության միջոցով բարեփոխումների իրականացման հրամայականը՝ Հանձնաժողովը մի շարք ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացման արդյունքում առաջարկություններ է ներկայացրել ՀՀ կառավարությանը ոլորտի մրցակցային միջավայրի գնահատման, բարելավման, ինչպես նաև մրցակցության բարձրացման վերաբերյալ: Մասնավորապես, «բաց երկնքի» քաղաքականության շրջանակներում առաջարկվել է վերացնել թռիչքների քանակներին, օդանավերի տեսակներին, նստատեղերի քանակներին վերաբերող բոլոր սահմանափակումները:

Հանձնաժողովը քաղաքացիների դիմումների հիման վրա ուսումնասիրություններ է իրականացրել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից գրասենյակային կահույքի և շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված մի շարք գնման ընթացակարգերի ոլորտում: Արդյունքում Հանձնաժողովի կողմից բացահայտվել են մի շարք խնդիրներ, որոնք առնչվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի հնարավոր խախտումներին, և դրանց վերացման խնդիրը Հանձնաժողովի իրավասությունների շրջանակներից դուրս են: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը, Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքները տրամադրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների, ինչպես նաև կրթության և գիտության նախարարություններին:

Հանձնաժողովը «Արմոբիլ» ՓԲԸ-ի կողմից ստացված դիմում-բողոքների հիման վրա ուսումնասիրություններ է իրականացրել մասնավոր պահնորդական ծառայությունների ոլորտում: Դրանց շրջանակներում վերլուծվել են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, «Ալեքսանդր Սպենդարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի, «Սարաջյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի, «Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և «Երևանի Թատրոնի և Կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ Գյումրու մասնաճյուղի կողմից կազմակերպված մրցույթների մրցութային փաստաթղթերը: Դրանց ուսումնասիրությունից պարզվել է, որ վերոնշյալ հաստատությունների կողմից հայտարարված մրցույթներում հստակ նշված չեն պահնորդական ծառայության մատուցման համար անհրաժեշտ պահակակետերի քանակը, պահակակետը հսկող պահնորդների թիվը, ծառայությունների մատուցման ժամանակահատվածը և այլն: Մինչդեռ, պահնորդական ծառայություն մատուցող կազմակերպությունները նշված տվյալների հիման վրա են հաշվարկում և որոշում մրցույթին առաջարկվելիք գինը, պլանավորում ընկերությունների հետագա գործունեությունը:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ամբողջությամբ տրամադրվել են Երևանի քաղաքապետարանին, ՀՀ ֆինանսների, մշակույթի, կրթության և գիտության նախարարություններին:

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Հանձնաժողովը, հիմք ընդունելով տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրները, օգտվելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակած փորձից, ծրագրում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք կապահովեն ծրագրային տարում ամրագրված նպատակների արդյունավետ իրագործման խնդրի լուծումը: Մասնավորապես դրանք ուղղված են մրցակցային միջավայրի ձևավորմանը, մրցակցային մշակույթի բարելավմանը, հանրության իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, այլ պետական մարմինների և միջազգային կառույցների հետ համագործակցությանը և այլն: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով ուսումնասիրությունների իրականացում՝ առավելապես ուշադրություն դարձնելով մրցակցային անհավասար պայմանների առաջացման, տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների կիրառման, տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտման կամ շուկայից դուրս մղման, սուբյեկտների կողմից իրականացվող գնային քաղաքականության հետ կապված հարցերին,
- հակամրցակցային համաձայնությունների բացահայտման նպատակով ուսումնասիրությունների իրականացում առաջին անհրաժեշտության և բարձր կենտրոնացվածության ապրանքային շուկաներում՝ առավելապես ուշադրություն դարձնելով շուկայի բաժանման, ապրանքների գների չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման, տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտման կամ շուկայից նրան դուրս մղման հետ կապված հարցերին,
- պետական գնումների ոլորտում, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից հայտարարվող մրցույթներում տնտեսվարող սուբյեկտների միջև մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման, ինչպես նաև առանձին մրցույթներում

հնարավոր մուտքի խոչընդոտների բացահայտման ուղղություններով ուսումնասիրությունների իրականացում,

- տարբեր տնտեսական միավորումների (ասոցիացիաների) կողմից հակամրցակցային համաձայնությունների կնքման (կայացման) բացահայտման նպատակով ուսումնասիրությունների իրականացում,
- համակենտրոնացումներին առնչվող շուկաների մրցակցային իրավիճակի վերլուծության նպատակով ուսումնասիրությունների իրականացում, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալության էլեկտրոնային ռեգիստրի հետևողական դիտարկումների կատարում՝ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման և առկա խնդիրների լուծման համար,
- անբարեխիղճ մրցակցության դրսևորումների՝ տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթության առաջացման, տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վարկաբեկման, հասարակության մոլորեցման, տնտեսվարող սուբյեկտի համբավի կամ վարկարժեքի վնասման դեպքերի բացահայտման և վերացման նպատակով ուսումնասիրությունների իրականացում գովազդի և ապրանքաշրջանառության ոլորտներում՝ մշտական ուշադրության կենտրոնում պահելով սուբյեկտների կողմից իրականացվող զեղչերի, տարբեր տեսակի ակցիաների, բոնուսների արդյունքում առաջացած անբարեխիղճ մրցակցության դրսևորման հնարավոր դեպքերի բացահայտումը,
- ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ընդլայնում, այդ թվում՝ արտադրության, ներմուծման և իրացման բնագավառում գործող ընկերությունների գործունեությանը վերաբերող տեղեկատվության հավաքագրում,
- մրցակցային մշակույթի բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացում, այդ թվում՝ հասարակության լայն շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացման ապահովում՝ բացահայտված իրավախախտումների վերաբերյալ հրապարակային նիստերի անցկացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և բիզնես ոլորտի, այդ թվում հանձնաժողովին կից հասարակական խորհրդի ներկայացուցիչների, զանգվածային լրատվության

միջոցների և շահագրգիռ այլ մարմինների հետ համագործակցության իրականացման միջոցով,

- մրցակցային օրենսդրության վերաբերյալ հանրության իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունների, Հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքների և իրավասության շրջանակների լուսաբանման միջոցով,
- օրենսդրական փոփոխությունների իրականացման աշխատանքներին Հանձնաժողովի մասնակցության ապահովում,
- Հայաստանի Հանրապետության ԵՏՄ-ին անդամակցման հետևանքով մրցակցային օրենսդրության ուղղությամբ ներդաշնակեցման անհրաժեշտ աշխատանքներին Հանձնաժողովի մասնակցության ապահովում,
- մրցակցային միջավայրի բարելավման ուղղությամբ միջազգային համագործակցության շրջանակներում համապատասխան աշխատանքների իրականացում ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ փոխգործակցության ամրապնդման ուղղությամբ միջոցառումների իրագործում, այդ թվում՝ տեղեկատվության փոխանակում, համատեղ նիստերի իրականացում, փոխադարձ հետարքրքրության և սոցիալական առաջնահերթության ապրանքային շուկաներում համատեղ ուսումնասիրությունների իրականացում և այլ մրցակցային միջավայրի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակման աշխատանքներին ակտիվ մասնակցության ապահովում,
- մրցակցության օրենսդրության արդյունավետ կիրառման նպատակով համագործակցություն այլ պետական մարմինների հետ մրցակցության կարգավորման միջազգային լավագույն փորձի վերլուծում և ՀՀ-ում դրա կիրառման ուղիների բացահայտում,
- մրցակցության պաշտպանության օրենսդրության նկատմամբ վերահսկողության իրականացում:

Հանձնաժողովը վերը ներկայացված միջոցառումները նախատեսում է իրականացնել 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության իրականացման խնդրի համար անկյունաքար են հանդիսանում տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները, որոնց անմիջական գործադրմամբ կարգավորվում են մրցակցության խնդիրները: Նշված մեխանիզմները սահմանվում են համաձայն իրականացվող մրցակցային քաղաքականության և գործում են Հանձնաժողովի իրավասությունների շրջանակներում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ծրագրի իրականացման համար նախատեսված, տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմներն են.

1. տնտեսական մրցակցության իրավիճակի բացահայտմանն ուղղված ուսումնասիրությունների իրականացում բարձր կենտրոնացվածության և սոցիալական նշանակության ապրանքային շուկաներում,

2. տեղեկատվության հավաքագրում՝ տնտեսվարող սուբյեկտների գործունեության և մրցակցային վարքագծի ուսումնասիրությունների ընթացքում, այդ թվում՝ հսկիչ գնումների, դիտանցումների և ստուգումների իրականացման արդյունքում,

3. տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության կիրառման վերաբերյալ պարզաբանումների տրամադրում և հանրության իրազեկման նպատակով դրանց տեղադրում Հանձնաժողովի ինտերնետ կայքում,

4. եզրակացությունների տրամադրում՝ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունված ակտերի, այլ փաստաթղթերի (կազմակերպված մրցույթների վերաբերյալ որոշումներ, արձանագրություններ և այլն)՝ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությանը հակասելու, ինչպես նաև մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող սուբյեկտի վարքագծի, կնքվող համաձայնությունների, պետական օժանդակությունների, ինչպես նաև համակենտրոնացումների արդյունքում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենդրության դրույթների խաթարման վերաբերյալ,

5. գործարարների հետ հանդիպումների անցկացում, մրցակցային օրենսդրության վերաբերյալ հարցերի քննարկում՝ խախտումների հնարավորինս կանխարգելման նպատակով,

6. պատասխանատվության միջոցների կիրառում՝ մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների կայացման, անբարեխիղճ մրցակցության գործողության դրսևորման, արգելված համակենտրոնացումները գործողության մեջ դրման, արգելված պետական օժանդակության տրամադրման դեպքերում,

7. օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ զգուշացման կիրառում՝ տնտեսվարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կանխման նպատակով,

8. Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված՝ պետական այլ մարմինների կարգավորման տիրույթում գտնվող մրցակցային խնդիրների վերահասցեագրում՝ դրանց լուծման նպատակով,

9. միջազգային համագործակցության շրջանակներում գործընկեր երկրների մրցակցային մարմինների հետ համատեղ ուսումնասիրությունների իրականացում,

10. տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքի խախտումների դադարեցում կամ դրանց հետևանքների վերացում և սկզբնական վիճակի վերականգնում,

11. օրենքին հակասող պայմանագրերի փոփոխում կամ լուծում՝ մրցակցության պաշտպանության նպատակով,

12. համակենտրոնացման կամ պետական օժանդակության, պետական մարմինների, տնտեսվարող սուբյեկտների կամ դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի կասեցում՝ ընդունած ոչ իրավաչափ ակտերի լուծարում՝ մրցակցության պաշտպանության նպատակով,

13. պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից Օրենքի դրույթների կիրառման վերաբերյալ խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցների, այլ փաստաթղթերի հաստատում՝ մրցակցային օրենսդրության կիրառման իրազեկման և խորհրդատվության տրամադրման նպատակով,

14. վերահսկողության իրականացում՝ Հանձնաժողովի որոշումների կատարման (պահպանման) նկատմամբ,

15. ստուգման, ուսումնասիրության (այդ թվում՝ հսկիչ գնման և (կամ) դիտանցման) իրականացում՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման կամ Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակով:

IV. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ

Ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկները հիմնականում վերաբերվում են շուկաների կառուցվածքին, մուտքի խոչընդոտներին, կարգավորման մեխանիզմներին, ներդրումային միջավայրին և այլն: Մասնավորապես կարևորվում են օրենսդրական փոփոխությունների իրականացման, սպառողների և բիզնեսի շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացման, Հանձնաժողովին կից հասարակական խորհրդի գործունեության ապահովման, միջազգային համանման մրցակցային կամ հակամենաշնորհային կառույցների հետ շարունակական համագործակցության կազմակերպման, ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի բացահայտման նպատակով կատարվող ուսումնասիրությունների շրջանակների ընդլայնման և տնտեսվարող սուբյեկտների գործողությունները կարգավորող տարբեր ընթացակարգերի՝ մրցակցության բարելավման տեսանկյունից ներկայացման ուղղություններով արված հետևյալ առաջարկությունները.

1. Առաջարկվում է քննարկել ներկայումս ՀՀ Ազգային Ժողովում գտնվող՝ Հանձնաժողովի կողմից մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթը, որն արտացոլում է մրցակցության օրենսդրության բարեփոխման հիմնական ուղղությունները և խթան կհանդիսանա մրցակցային իրավիճակի բարելավման համար: Միաժամանակ, ԵՏՄ անդամակցության կապակցությամբ, Հանձնաժողովը, ՀՀ-ում գործող իրավական ակտերը ԵՏՄ նորմատիվ իրավական բազային ներդաշնակեցման նպատակով մշակել է ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ): Նախագծով առաջարկվող լրացումները և փոփոխությունները վերաբերում են գործող Օրենքով սահմանված հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումների դրսևորումների հստակեցմանը և լրացմանը, պետական մարմինների և տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց կողմից Օրենքի խախտման համար պատասխանատվության միջոցների նախատեսմանը,

տուգանքների կիրառման մեխանիզմների կատարելագործմանը, ինչպես նաև մի շարք հասկացությունների սահմանմանը և հստակեցմանը:

2. Առաջարկվում է կազմակերպել անհրաժեշտ միջոցառումներ հասարակության և գործարար շրջանակների կողմից մրցակցային օրենսդրության հանդեպ պատասխանատվության գիտակցության ձևավորման, իրազեկվածության մակարդակի բարձրացման համար: Միաժամանակ, ելնելով նախորդ տարիների ընթացքում կուտակած փորձից, Հանձնաժողովը եկել է այն եզրահանգման, որ հաճախ տնտեսվարող սուբյեկտները խախտում են մրցակցության պաշտպանության օրենսդրությունը տեղեկացվածության ցածր մակարդակի պատճառով: Այսպես, Հանձնաժողովի կողմից ինտերնետային կայքում համակենտրոնացումների վերաբերյալ հայտարարության տեղադրմամբ պայմանավորված էապես ավելացել են հայտարարագրման ենթակա, սակայն չհայտարարագրված համակենտրոնացումների վերաբերյալ Հանձնաժողով ներկայացված դիմումները: Բացի այդ, հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացումը հնարավորություն է տալիս սպառողների միջոցով վերհանել և դիտարկման առարկա դարձնել մեծ թվով մրցակցային խնդիրներ, ինչպես նաև նպաստել դրանց արդյունավետ լուծմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովը նախատեսում է ոչ միայն ինտերնետային կայքի, այլև մամուլի հրապարակումների, տարբեր հաղորդաշարերի, սեմինար-քննարկումների միջոցով ակտիվացնել մրցակցային օրենսդրության դրույթների լուսաբանման աշխատանքներին հանրության մասնակցությունը:

3. Առաջարկվում է շարունակել Հանձնաժողովին կից հասարակական խորհրդի նիստերի աշխատանքները, որոնց միջոցով կարող են բացահայտվել սպառողներին և տնտեսվարող սուբյեկտներին հետաքրքրող մի շարք կարևոր մրցակցային խնդիրներ, ինչպես նաև հասարակությանն իրազեկել խորհրդի կողմից նախկինում բացահայտված խնդիրների լուծման մասին: Հարկ է նշել, որ այս ուղղությամբ վերջին տարիներին կատարվել են մեծածավալ աշխատանքներ, որոնց ընթացքում բարձրացվել և լուծվել են բազմաթիվ խնդիրներ, իսկ այն խնդիրները, որոնք գտնվել են Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից դուրս, փոխանցվել են համապատասխան պետական մարմինների: Ըստ այդմ, Հանձնաժողովը ծրագրային տարում ակնկալում է առավել արդյունավետ օգտագործել հասարակական

խորհրդի՝ Հանձնաժողովին աջակցման հնարավորությունները մրցակցային խնդիրների լուծման և հասարակության իրազեկման հարցերում:

Նշված ուսումնասիրությունների շրջանակներում նախատեսվում է դիտարկել ապրանքների արտադրության, ներմուծման և իրացման ընդհանուր պայմանները՝ նպատակ ունենալով վերհանել տվյալ բնագավառում գործող ընկերությունների գործունեությանը, այդ թվում՝ գործարարության զարգացմանը խոչընդոտող հնարավոր գործոնները, որոնց լուծումը կհանգեցնի ոլորտում գործող ընկերությունների քանակի ավելացմանը՝ արդյունքում խորացնելով ընկերությունների միջև մրցակցությունը:

V. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Հանձնաժողովի կողմից կատարվող փոխգործակցության շրջանակներում առանձնակի կարևորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ) հետ համագործակցությունը, որի շրջանակներում արդեն իսկ Հանձնաժողովի կողմից կազմակերպվել են քննարկումներ դեղերի շուկայում գնագոյացման գործընթացների ուսումնասիրությանն առնչվող մեթոդաբանական հարցերի և առկա փորձի փոխանակման աշխատանքների իրականացման վերաբերյալ: Միաժամանակ, Հանձնաժողովի և ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի միջև համագործակցության շրջանակներում ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի աշխատակիցները փորձի փոխանակման նպատակով հրավիրվել և մասնակցել են Հանձնաժողովի կողմից կազմակերպված սեմինարներին, քննարկումներին: Հանձնաժողովները համատեղ աշխատանքներ են իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառման ուղղությամբ: Հանձնաժողովների միջև կնքված համաձայնագրի շրջանակներում իրականացվում է հավաքագրված տեղեկատվության պարբերական փոխանակում՝ հնարավորություն տալով գործուն արձագանքել առանձին շուկաներում հնարավոր խնդիրների առաջացմանը: Բացի այդ, համագործակցության շրջանակներում Հանձնաժողովն օժանդակել է ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ին արտերկրի մրցակցային մարմինների գործելաոճին, վարույթների իրականացման ընթացակարգերին, մրցակցության ոլորտին առնչվող իրավական նորմերին և չափորոշիչներին, ինչպես նաև աշխատակիցների մասնագիտական կարողությունների ընդլայնման գործընթացին ծանոթանալու հարցում: Վերը թվարկված բոլոր ուղղություններով Հանձնաժողովը 2016 թվականին ևս շարունակելու է սերտ համագործակցությունը ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի հետ մրցակցային խնդիրների բացահայտման և կանխարգելման նպատակով:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում արդյունավետ համագործակցություն է ծավալել Հայաստանի Հանրապետությունում գործող

միջազգային և դոնոր կազմակերպությունների, օտարերկրյա մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինների հետ: Հանձնաժողովի գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում միջազգային պայմանագրերով սահմանված՝ տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարումը:

Հանձնաժողովն իր գործունեության վերջին տարիներին երկկողմանի սերտ համագործակցություն է ծավալել, մասնավորապես, ԱՊՀ անդամ պետությունների, Գերմանիայի Դաշնության, Լիտվայի Հանրապետության, Ֆրանսիայի մրցակցային մարմինների և ԱՄՆ Առևտրի դաշնային հանձնաժողովի հետ: Հանձնաժողովը 2016 թվականին ևս նախատեսում է ամրապնդել առկա հարաբերությունները և քայլեր ձեռնարկել երկկողմ և բազմակողմ համագործակցության հետագա ընդլայնման համար:

Միաժամանակ, Հանձնաժողովն աշխատանքներ է կատարելու Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում նախատեսվող միջոցառումների իրականացման ուղղությամբ: Ըստ այդմ, 2016 թվականին ևս շարունակվելու է համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության հակամենաշնորհային կամ մրցակցային մարմինների հետ՝ մասնավորապես ստորագրված իրավապայմանագրային բազայի հիման վրա մրցակցային ոլորտին առնչվող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, փորձի փոխանակման և համատեղ միջոցառումների կազմակերպման նպատակով:

Հանձնաժողովը բազմակողմ համագործակցության շրջանակներում անդամակցում է Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՑ/ICN), Էներգետիկ համայնքի մրցակցության ցանց (ԷՀՄՑ/ECCN) կազմակերպություններին և ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդին (ՀՔՄԽ/MCAП), ինչպես նաև սերտ համագործակցում է Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD) և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (ՄԱԱԶՀ/UNCTAD) հետ: Հանձնաժողովը 2016 թվականին ևս շարունակելու է նշված համագործակցությունը,

որի արդյունքում կձևավորվեն և կհաստատվեն մրցակցության քաղաքականության կիրարկման և օրենսդրությունների համապատասխանեցման ուղղություններով համատեղ գործողությունների շրջանակները, համատեղ ուսումնասիրությունների իրականացման մեխանիզմները:

Այնուհետև, Հանձնաժողովը շարունակելու է տարբեր միջազգային համաժողովների և սեմինարների ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության բնագավառում պետական քաղաքականության իրականացման վերջին զարգացումները և աշխատանքներ է իրականացնելու Հայաստանի Հանրապետությունում համանման միջոցառումների կազմակերպման ուղղությամբ միջազգային տնտեսական գործընթացներին ինտեգրման և աջակցման նպատակով:

Երկրի գործընկերության ռազմավարության շրջանակներում տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրային ուղղություններից ելնելով՝ Հանձնաժողովը նախատեսում է շարունակել աշխատանքներն Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ/IMF) և Համաշխարհային բանկի (ՀԲ/WB), ինչպես նաև նոր բանակցային գործընթաց մեկնարկել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ/USAID) հետ, ինչը կնպաստի անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումներին և կխթանի Հանձնաժողովի աշխատակազմի կարողությունների զարգացումն ու ոլորտային ուսումնասիրությունների իրականացումը:

Հանձնաժողովը Գերմանիայի միջազգային համագործակցության (ԳՄՀ/GIZ) ընկերության հետ «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում շարունակելու է բանակցությունները հնարավոր համագործակցության հեռանկարների շուրջ:

Հանձնաժողովը շարունակելու է համագործակցությունը Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության հետ տնտեսական մրցակցության օրենսդրության և կիրարկման ոլորտում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի առնչությամբ՝ կապերի ամրապնդման և հնարավոր համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Այսպիսով, Հանձնաժողովը 2016 թվականին հետևողականորեն կշարունակի սերտ համագործակցությունը վերոնշյալ կազմակերպությունների և մարմինների հետ՝ մրցակցային խնդիրների լուծման ուղիների բացահայտման նպատակով: